ԴՎԻՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Դվին քաղաքի պեղումները վերջին տասնամյակում ուշագրավ նյութ են ընձեռում անտիկ բնակավայրի բաղմակողմանի ուսումնասիրության համար։ 1982—1985 թթ. միջնաբերդի բազաթին ձեռնարկված հնագիտական աշխատանքների շնորհիվ[1] ի հայտ եկան շինարարական մնացորդներ (նկ. 1)։ Առայժմ բացված այդ մնացորդներից դատելով պեղվող տարածքում կառուցված է եղել մի մեծ շինություն, որը զբաղեցրել է ավելի քան 300 քառ. մ մակերես։ Ուսումնասիրվող շենքի հետքերը երևան են եկել միջնաբերդի հանգուցային կետերից մեկում՝ IV—V դդ. բազիլիկ եկեղեցու և սրանից հյուսիս ընկած՝ V—VI դդ. աղյուսաշեն կառույցի միջև։

Նկ. 1

Այս շինության հյուսիսային և հարավային հատվածները անմիջապես ընկած են հիշյալ միջնադարյան կառույցների հիմքերի տակ։ Մի հանգամանք, որ առայժմ թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել պեղվող շենքի մասին։ Այսուհանդերձ, առաջին անգամ Դվինի միջնաբերդում հայտնաբերվել է որոշակի հատակագծային հորինվածքով և շինարարական տեխնիկայով կառուցված հելլենիստական դարաշրջանի շինություն։

Շենքի հատակագծային հորինվածքի կարևոր բաղադրամասը ուղղանկյուն հատակաձևի դահլիճն է (7,0× 8,0 մ, նկ. 2)։ Այն հյուսիսից հարավ ձգվող, միմյանց զուգահեռ պատերով (լայն-

[1] Ա. Ա. Քալանթարյան. Դվինի 1981—1982 թթ. պեղումների հիմնական արդյունքները.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1986, № 3, էջ 94։ Գ. Գ. Քոչարյան. Նոր նյութեր Դվինի հելլենիստական բնակավայրի վերաբերյալ.— Հայկական ՍՍՀ-ում 1983—1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան (զեկուցումների թեզիսներ), Երևան, 1985, էջ 38։

1,0—1,15 մ, պահպանված բարձր. 0,60—1,0) կազմված սրահ է, ծածկը հենվել է տորաձև խարիսխներով սյուների վրա. որոնցից in situ հայտնաբերվել են զույգ խարիսխներ։ Սրանք դահլիճը բաժանել են երեք լայնակի մասերի (կենտր.՝ 3.0 մ. կից թևերը՝ 2.5 մ)։

Դահլիճից դեպի արևմուտք քարե հիմքերով և հում աղյուսե վերնամասերով հիմնական և



Նկ. 2

սրանց կապակցված միջնորմները կազմում են առանձին բջիջների բավական անկանոն հատակագծային ցանց։ Այստեղ, 1960-ական թթ., բեռրոշ նյութերի միջավայրում հայտնաբերվել է մեկ զույգ տորաձև խարիսխ։

Դահլիճին կից արևելյան թևում բացվել է ուղղանկյուն հատակագծով երկայնակի սրահ (5,30×4,5 մ, պատերի լայն. 1,0 մ, բարձր. 0,80—0,90 մ), որի արևելյան պատին զուգահեռ, որոշ հեռավորության վրա, բացվել է բավական հոր մի պատի հատված (լայն. 1,0 մ, բարձր. 0.90 մ)։ Այս երկու պատերը կազմում են հյուսիսից հարավ ձգվող միջանցք (լայն. 1,10 մ)։ Սա արևելյան թևում պահպանված կառույցների վերջին սահմանն է, քանի որ դեպի արևելք անտիկ ժամանակաշրջանի մշակութային շերտերը խաթարվել են ավելի ուշ դարաշրջանի կառույցների հետևանքով։

Շինությունը կառուցելիս օգտագործել են սպիտակ ավազաքար, գետաքար, կավ և փայտ։ Պատերի հիմքերը շարված են գետաքարով։ Միջին չափերի, անտաշ, մոխրագույն գետաքարերը կազմում են բավական բարձր (1 մ և ավելին), կանոնավոր հորիզոնական շարքեր հատկապես հիմնական պատերի շարվածքում։ Տեղական

2 Կ. Գ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները. հ. II, Երևան, 1982, էջ 69—70։ Տե՛ս Մ. Կարապետյանի 1963 թ. դաշտային օրագիրը։

սպիտակ ավազաքարից են կերտված մի քանի սրբատաշ սալեր և տորաձև խարիսխները։ Սրբատաշ սալերից երեքը (0,50×0,54×0,26—0,51×0,31×0,26—0,50×0,35×0,22 մ) հայտնաբերվել են միմյանց վրա՝ դահլիճի հյուսիսային հատվածում, իսկ չորրորդ սալը՝ (0,57×0,22×0,9 մ) նույն դահլիճի արևմտյան՝ երկայնակի պատի շարվածքի մեջ։ Այս սալերը օրգանապես չեն կապակցվում քննվող շենքի հետ։ Սրանք, տվյալ դեպքում, առնչվում են վաղ միջնադարյան կառույցներին։ Նշենք, որ բազիլիկ եկեղեցու սյուների պահպանված բոլոր վեց պատվանդանները կառուցված են կրկնակի օգտագործված սրբատաշ սալերով (տուֆ, սպիտակ ավազաքար)։ IV—V դդ. բլրի ինտենսիվ կառուցապատման ժամանակ, քարի սղության պայմաններում, օգտագործվել են վաղուց ի վեր իրենց նշանակությունը կորցրած շենքերի քարերը։ Դեռ ավելին, նախորդ դարաշրջանի հիմնապատերը հաճախ ելակետ են հանդիսացել նոր հատակաձևին ցանցը կազմելիս։ Հայտնաբերված սրբատաշ սալերը հավանաբար բերվել են անտիկ մեկ այլ մոնումենտալ շինությունից և կրկին օգտագործվել վաղ միջնադարում։ Դահլիճի խարիսխները տաշված են մեկ ամբողջական զանգվածից, քառակուսի ներքնասալի վրա, նեղ դարակիկով օժտված տորուսով, տափակ, շրջանաձև թմբիկով (բարձր. 0,35 մ, ներքնասալ՝ 0,60×0,60×0,35 մ, տոր. ար. 0,45 մ)։ Դահլիճի արևմտյան թևում 1963 թ. հայտնաբերված խարիսխները նույնպես սպիտակ ավազաքարից են, սակայն քառակուսի ներքնասալի վրա միմյանց հենված երկու տորուսով (նկ. 3)։ Վերին՝ համեմատաբար փոքր տորուսը օժտված է նեղ դարակիկով (բարձր. 0,34 մ, ներքնասալ՝ 0,40×0,40×0,10—0,37×0,37×0,10 մ, տոր. տր. 0,26—0,28 մ)։ Խարիսխների վրա հենվել են այն փայտյա գլանները։ Պատերի քարերը միմյանց հետ շաղկապվել են կավով, վերնամասերը՝ շարվել են հում աղյուսով, բացված հատակները կավակերտ են։ Հավանաբար, պատերը ունեցել են կավե սվաղ և ներկվել են։

Նկ. 3

Մեծ շինության պեղումների շնորհիվ բացահայտվել է հետևյալ հետաքրքիր շերտագրական պատկերը. շենքի որոշ հատվածներ խորացնելիս կավակերտ հատակի տակ բացվել են Դվինի վաղ երկաթի դարաշրջանի մշակութային շերտին պատկանող կառույցների քարե հիմքեր և այդ ժամանակին բնորոշ սև խեցեղեն։ Մ. թ. ա. I հազարամյակի սկզբի շինարարական հորիզոնների վրա, ինչպես հավաստում են հայտնաբերված նյութերը, հետագայում՝ մ. թ. ա. II դարում կառուցվել է մեծ շինությունը։ Վերջինս իր գոյության ընթացքում կրել է շինարարական մի շարք փոփոխություններ։ Այդ մասին է վկայում տարբեր մակարդակների վրա գտնվող երեք հատակների, հաճախ հիմնական կառույցներին անկանոն կապակցված միջնորմների առկայությունը։ Շենքի վերին՝ երրորդ հատակը, քանդված հում աղյուսե պատերի մնացորդներով, ջարդոտված խեցանոթների բեկորներով հագեցված, մեծ հրդեհի հետևանքով վառ կարմիր երանգ ստացած վառված շերտ է։ Ի դեպ, սյունազարդ դահլիճի հատակի վրա հայտնաբերվել

է մարդու գանգ։ Դիտարկումները բացահայտում են, որ հիշյալ վառված շերտը համապատասխանում է մ. թ. I դարի կեսերին հռոմեական զորավար Կորբուլոնի զորքերի հարձակման ժամանակաշրջանին վերագրվող, ընդհանրապես ամբողջ բնակավայրի կործանման հետևանքով առաջացած, բլրի տարածքով մեկ սփռված, հրդեհված շերտին3։ Քննվող շենքը՝ կառուցված բնակավայրի հիմնարկման ժամանակներից, վերջինիս հետ էլ՝ I դարի կեսերին դադարում է գոյություն ունենալուց։ Գրեթե երեք հարյուրամյակ հետո բլրի գագաթում վեր է խոյանում վաղ միջնադարյան եռանավ բազիլիկ եկեղեցին, որի հզոր քարե հիմքերը կառուցվում են վաղուց ի վեր ավերված շինության տեղ։ Անտիկ շենքի պահպանված պատերը մնում են եկեղեցու շարունակ հիմքերի տակ։ Նման շերտագրական առնչություններ դիտվում են նաև ծայր հյուսիսային հատվածում. հին պատերը ակնհայտորեն մտնում են V—VI դդ. հում աղյուսե կառույցի տակ։

Այսպիսով, անտիկ շինության երևացող մասերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում արձանագրել երեք տարբեր դարաշրջանների՝ միմյանց հաջորդող շինարարական գործունեությունը արտացոլող կարևոր շերտագրական հանգույցներ (նկ. 4)՝ վաղ երկաթի (մ. թ.ա. I հազարամյակի սկիզբ), հելլենիստական (մ. թ. ա. II—I դդ.), վաղ միջնադարյան (IV—V և V—VI դդ.)։



Նկ. 4

1985 թ. եռանավ բազիլիկ եկեղեցին նորովի ուսումնասիրելիս հայտնաբերվել է շինարարական միջանկյալ մի հորիզոն՝ միմյանց հատող պատերի կանոնավոր քարե հիմքեր, որ կառուցված են մ. թ. ա. II—I դդ. հրդեհված շերտի վրա, անմիջապես բազիլիկի կրաշաղախ հատակի տակ։ Միաշար բարձրությամբ պահպանված պատի հիմքը հյուսիսից հարավ 6,45 մ երկարությամբ ձգվելով ուղիղ անկյուն է կազմում դեպի արևելք ձգվող հիմնաապատի հետ, որը հնարավոր եղավ բացել 3.10 մ երկարությամբ (պատերի լայն. 1,36 մ)։ Շինարարական մնացորդները, հավանաբար, պատկանում են մեր թվականության առաջին դարերին։ Այս ժամանակաշրջանը Դվինում առայսօր վկայված է հնագիտական պատահական նյութերով։ Նման հարցերը գեռևս լուսաբանման կարիք ունեն։

Վերը նկարագրված մեծ շինությունը բացվել է 1,5 մ հզորություն ունեցող մշակութային մի շերտում, որը հարուստ է հասարակ և գունազարդ խեցանոթների բեկորներով, վերջիններիս հետ գտնվել են հատուկենտ մետաղյա իրեր։ Կավանոթների որոշակի տեսակներից (տափաշիշ, ըմպանակ, օյնոխոյա, սկուտեղ և այլն) կազմված և բնորոշ գեղարվեստական հարդարում (մասնավորապես, գունազարդում) ունեցող հավաքածուն ներառնվում է այդ շրջանակի մեջ, որ թե՛ շերտագրական և թե՛ նման նյութերի սերտ աղերսների շնորհիվ թվագրվում է մ. թ. ա. II—մ. թ. I դդ.։ Թեպետ ի հայտ եկած մետաղյա նյութերը սակավ են, սակայն մեկական նմուշով ներկայացնում են հելլենիստական ժամանակի մետաղագործության տարբեր բնագավառները (կոր շեղբով երկաթե դանակ, կոթատավոր տեգ, բրոնզյա, շրջանաձև, անդարդ հայելի և այլն)։ Հայտնաբերված նյութերի ֆիքսումը շենքի հատակագծի վրա բացահայտում է խեցեղենի (սեղանի սպասք, տնտեսական նշանակության անոթներ) գերակշռող մասի կենտրոնացումը արևմտյան թևում։ Նյութերը անհամեմատ պակաս են արևելյան թևում և հատկապես՝ սյունազարդ դահլիճում և կից սրահում։ Շենքի արևմտյան թևի վերակառուցումների ենթարկված և ժամանակի ընթացքում հատակագծային տարբեր փոփոխություններ կրած առանձին բաղնիքները, որ հագեցված են կավանոթներով, ամենայն հավանականությամբ, եղել են տնտեսական բույթի հարկաբաժիններ։ Անմիջապես

3 Ա. Ա. Քալանթարյան. Դվինի նյութական մշակույթը V—VIII դդ. Երևան, 1970, էջ 10։

բլրի լանջին հարող շինությունն արևելյան թևը պաշտպանական տեսակետից ավելի հիմնավոր է կառուցապատվել։ Կարևոր նշենք, որ երկու շղոր բարակերտ պատերով կազմված միջանցքի շնորհիվ դահլիճը և նրա սրահը անջատվել են արևելյան՝ տարբեր բնույթի (?) երբեմնի հարկարաժիններից, որտեղ այսօր սփռված են ուշ ժամանակների մշակութային շերտերը։

Հայտնաբերված խարիսխները մատնանշում են, որ դահլիճը (դռ.ց՝ և արևմտյան կողմի կից հարկարաժիններից մեկը) ունեցել է ներքին սյուների վրա հենված (հավանաբար, գլխատան տանիք հիշեցնող), վերին լուսավորությամբ ծածկ։ Հետաքրքիր է, որ Կապաղակում բացված, դրեթե նույն ժամանակի հասարակական բնույթի շինության սյունազարդ դահլիճների նույնպիսի երդիկավոր ծածկերը հենվել են երկուական սյուների վրա[4]։ Ի դեպ, Դվինի հելլենիստական դարաշրջանի մշակութային շերտում մշտապես հայտնաբերվել է in situ *մեկական զույգ խարիսխ։ Այսուհանդերձ չի բացառվում, որ քննվող սյունազարդ դահլիճը օժտված է եղել երկուսից ավելի սյուներով։ Մասնագետների կարծիքով, ի տարբերություն անտիկ և ավելի վաղ ժամանակների սյունազարդ կառույցների, արդեն վաղ միջնադարյան նաև շինություններում սյուները գրվում էին երկայնակի պատերին նկատելիորեն մոտ՝ անհամեմատ մեծացնելով կենտրոնական սրահը։ Ներքին տարածական լուծման այդ եղանակը, հավանաբար, բխել է տվյալ ժամանակաշրջանում շենքի կատարած նոր դերից։*

Փաստական նյութի սղության պատճառով դժվարանում է շինության բաժանմունքների ֆունկցիոնալ տարբերակումը, պարզ չէ նաև, թե վերջիններս ինչպե՞ս են հաղորդակցվել դահլիճի հետ. ունեցե՞լ է այն արդյոք հյուսիսից և հարավից հարող յայնակի բաժանմունքներ և այլն։ Այսուհանդերձ բացահայտ է, որ շենքի կենտրոնական մասում գտնվել է դահլիճը, որին հարել են, հավանաբար, վերջինիս հետ հաղորդակցվող, օժանդակ սենյակները։ Պահպանված չափով շենքի հատակագծային հորինվածքը համապատասխանում է ավանդական սխեմային[5]։ Ավանդական ճարտարապետության առումով հետաքրքիր է նաև արևելյան սյունակարգի հիմքը կազմող տորաձև խարիսխների կուլտուր-պատմական պատկանելության հարցը։ Արևելյան սյունակարգի ծագման արմատները ի հայտ են գալիս Հնարևելյան ճարտարապետության մեջ, որտեղ հատուկ տեղ է հատկացվում ուրարտական շինարարական կուլտուրային[6]։ Ավանդական խոր արմատների առկայությամբ էլ փորձ է արվում բացատրել տորաձև խարիսխների ձևաբանական էվոլյուցիոն շարքի կենսունակությունը Հայաստանում՝ սկսած ուրարտական ժամանակներից մինչև ուշ միջնադար։ Արևելքում, հելլենիստական դարաշրջանի ճարտարապետության մեջ, սկսած մ. թ. ա. III—II դդ., առաջատար տեղ էին գրավում արևելյան սյունակարգի հիմքը կազմող տեղական ծագումով, տորաձև և բուն Հունաստանից ներմուծված հոնիական սյունակարգի «ատտիկական» խարիսխները։ Երկու տարբեր ծագում ունեցող խարիսխների համատեղ գործածությունը այդ հսկայական տարածքում պայմանավորված էր դարաշրջանին բնորոշ համընդհանուր կուլտուրայի ուղղակի մակարդակի առկայությամբ։ Հայաստանը ևս իր տեղական-ավանդական հարուստ մշակույթի և ժամանակին հատկանշական տարաբնույթ առնչությունների շնորհիվ յուրացրել էր այդ կուլտուրայի տարրերը, հաճախ նույնիսկ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում։ Այսպես, Հայաստանի անտիկ դարաշրջանի բազմաթիվ հուշարձաններում (Արմավիր, Արտաշատ, Շիրակավան, Փայտակարան, Մոխրաբլուր, Ավան, Դվին)[7] հայտնաբերվել են սյան տորաձև, իսկ Գառնիում[8] և Դվինում[9] նաև «ատտիկական» խարիսխներ։

Այսպիսով, մ. թ. ա. II դարում Դվինի հելլենիստական դարաշրջանի բնակավայրի հիմնադրման կապակցությամբ շրջակայքի նկատմամբ գերիշխող և պաշտպանական տեսակետից շահեկան բլրի գագաթը, հավանաբար, անմիջապես յուրացվել է բնակիչների կողմից։ Այստեղ, ըստ էության, պահպանելով ավանդական կոնստրուկտիվ սկզբունքները, սակայն ժամանակին բնորոշ շինարարական տեխնիկայով, նորովի մշակ-

---

[4] И. А. Бабаев. Исследования общественного здания второй половины I в. до н. э.—I в. н. э. на городище Кабала.—СА, 1977, № 4, с. 223—225.

[5] *Կ. Կ. Ղաֆադարյան. Արդիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը. Երևան, 1984, էջ 79—80, 126—129։*

[6] И. Р. Пичикян. Торовидные базы (происхождение, хронология).—В кн.: Культура и искусство народов Средней Азии в древности и средневековье. М., 1979, с. 57—61.

[7] *Գ. Գ. Քոչարյան. Դվինը անտիկ դարաշրջանում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 272—275։*

[8] К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э.—IV в. н. э.). М.—Л., 1953 с. 40.

[9] *Վ. Մ. Հարությունյան. Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները. Երևան, 1950, էջ 94—95, նկ. 37, 38։*

ված հումքով, ստեղծագործական վարպետությամբ կերտված սյան խարիսխներով կառուցվում է մեծ շինությունը[10]։ Այն ճյուղավորված բաժանմունքներով տարածվելով բլրի գագաթում, կարծես պաշտպանության տակ էր առնում ամբողջ շրջակայքը։ Շինության հատվածական ուսումնասիրության հետևանքով վերջինիս ֆունկցիոնալ բնույթը որոշակիորեն չի բացահայտվում։ Այսուհանդերձ հիշյալ հանգամանքները՝ կապված շենքի տեղադրության, շինարարական կուլտուրայի, մասամբ և հնագիտական նյութերի զուգորդման հետ, հնարավորություն են ընձեռում ենթադրելու, որ շենքը, հավանաբար, վարչատնտեսական դեր է կատարել նորաստեղծ բնակավայրի համար։

Հետաքրքիր է, որ 1986 թ. եռանավ բազիլիկ եկեղեցուց հարավ՝ գունազարդ տափաշչերի, խաչազարդ թասերի, մատնեքավոր նստուկով ըմպանակի, կավե և քարե սկահակների բեկորներով հագեցված հելլենիստական ժամանակի մշակութային շերտում նույնպես բացահայտվել են կառույցների մնացորդներ՝ նարնջագույն տուֆ քարից կերտված, անթերի մշակմամբ տորաձև խարիսխների առկայությամբ։ Ուսումնասիրության այս սկզբնական փուլում դեռևս հայտնի չէ բացված շինությունների հատակագծային պատկերը, բայց սրանց գոյությունն իսկ վկայում է, որ վերջ քննվող շինությունը միակը չէ։ Մ. թ. ա. II—I դդ. բլրի դագաթը կառուցապատված է եղել դարաշրջանի շինարարական կուլտուրային բնորոշ, հավանաբար տարբեր բնույթի շենքերով։

Գ. Գ. ՔՈՉԱՐՅԱՆ

10 Ավանդական Հարտարապետության հիմքի վրա, բայց նորովի են կառուցված Վիրքում՝ Բագինետի արքայական նստավայրի մ. թ. ա. II—I դդ. ընդարձակ Հարտարապետական համալիրը, որի հիմնական կառույցը ուշագրավ դահլիճն է՝ երկայնական առանցքով տեղադրված սյան տորաձև խարիսխներով կամ Աղվանքում՝ Կապաղակի մ. թ. ա. I դարի հասարակական բնույթի շենքը, որտեղ նույնպես գործածվել են տորաձև խարիսխներ (А. М. Апакидзе. Города древней Грузии. Тбилиси, 1968, с. 37—41; И. А. Бабаев. Указ. соч., с. 217—227.

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՈՐՊԵՍ ՍԼԱՎՈՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԼԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Վերջին ժամանակներում արտասահմանյան սլավոնագետների և բալկանագետների ուշադրությունն ավելի ու ավելի հաճախ են գրավում Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյան միաբանությունների հարուստ գրադարաններն ու դիվանները։ Այդ հետաքրքրության ցայտուն օրինակ կարող են հանդիսանալ հետևյալ երեք գրքերը, որոնք համառոտ կներկայացնենք ստորև։

Inventaire des sources arméniennes sur l'histoire balkanique: D'après le cataloque des manuscrits arméniens de la Congrégation des Méchitaristes—Vienne. Par Agop Ormanjan avec le concours de Reïa Zaïmova. Sofia. CIBAL, 1980, 99 p.

Բուլգարահայ պատմաբան Հակոբ Օրմանճյանը Ռայա Զաիմովայի համագործակցությամբ պատրաստել է «Բալկանների պատմության հայկական աղբյուրների ցուցակը» Հ. Տաշյանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» հիման վրա։ Գիրքը հրատարակվել է Սոֆիայում Բալկանյան և Միջերկրածովյան երկրների պատմության ինֆորմացիայի Միջազգային կենտրոնի (CIBAL) կողմից։

Ցուցակում ընդգրկված են բոլոր այն ձեռագրերը, որոնք որևիցե առնչություն ունեն Բյուզանդիայի, Օսմանյան կայսրության, բալկանյան ժողովուրդների պատմության հետ։ Ձեռագրերի մեծամասնությունը կազմում են Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկի, Արիստակես Լաստիվերցու, Մատթեոս Ուռհայեցու, Երեմիա Քյոմուրճյանի և այլ նշանավոր հայ պատմիչների գործերը։ Անշուշտ, բալկանագետների և հայագետների հետաքրքրությունը կառաջացնեն Բալկանների և Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ XVII—XIX դդ. հայկական աղբյուրները, որոնք չեն հրատարակվել և չեն էլ ուսումնասիրվել։ Կարող ենք նշել 1821 թ. հունական ապստամբության (№ 779, D—28) կամ 1826 թ. ենիչերիների ապստամբության մասին (№ 780, T) հատվածները, «Օսմանյան կայսրության պատմությունը» երկու մասով (№ 786) և մի շարք այլ ձեռագրեր։ Անտիպ նյութերի ուսումնասիրությունը և հրապարակումը կհայտնաբերի նոր, մինչ այժմ անհայտ փաստեր, կհաստատի, որ հայերը միշտ էլ մեծ ուշադրությամբ են հետևել թուրքական լծի դեմ բալ-